



ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱՆԴՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԵՎ ԲԱՇԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Տեր Հովհաննես քահանա Տեր-Մինասյան.

Ծնվել է Ապարանի շրջանի Բյուլլուջա գյուղում 1880 թվին: Պապերը կոտորածներից հրաշքով փրկված, գաղթել են Տաճկահայաստանի Մշո գավառի Ղարամի շրջկենտրոնից: Նրանք տոհմով եղել են հոգեվորականներ: Տեր Հովհաննեսը նախնական կրթությունը ստացել է Էջմիածնի հրեզամյա ծխական դպրոցում, որն ավարտելուց հետո հայրը՝ տեր Համազասպը, նրան ընդունել է տալիս Բաթումիի թեմական հոգեվոր դպրոցը: Ավարտում է այն գերագանց գնահատականով և քաղաքի հայոց եկեղեցում ծառայում է որպես դպիր: Ամուսնանում է, ունենում է երեխաներ: Որպես դպիր, չորս տարի ծառայելուց հետո, նրան վերցնում են ցարական բանակ. ապա սովորում է զինվորական դպրոցում և այն ավարտելով, հասնում ենթասպայի աստիճանի: Չորս տարի մնալուց հետո զորացրվում է բանակից 1910 թվին և վերադառնում հայրենի գյուղ:

Տեր Հովհաննեսը ազատ ժամանակ զբաղվում էր ինքնագարգացմամբ, իսկ գյուղի եկեղեցում կատարում դպիրի իր ծառայությունը, ստանում թերթեր և ժողովրդին բացատրում երկրում տեղի ունեցող անց ու դարձերից:

1913 թվին վախճանվում է հայրը՝ տեր Համազասպը, որից հետո 1914 թվին ինքն է ձեռնադրվում Գյուլլուջա գյուղի քահանա: Առաջին համաշխարհային պատերազմը

նորոճած քահանային նոր հոգսերի առաջ կանգնեցրեց, 1915 թվի գարնանը եղեռնից փրկված հազարավոր թշվառների ուրվականները լցվեցին և Ապարանի գյուղերը: Որպես ձեռներեց, ազնիվ և անշահախնդիր հոգևորական, վերադաս մարմինների կողմից նշանակվեց գաղթականության շրջանի պարենավորման կոմիտեի նախագահ: Օրերով ձի նստած շրջում էր գյուղերը, հրահանգում, հոգում նրանց սննդամթերքի, հագուստեղենի և այլ կարիքները:

Կարճ ժամանակաընթացքում արդեն աչքի ընկնող խոշոր ծառայությունների համար դարձավ շրջանի ժողովրդի ամենից սիրված և հարգված քահանան, առավել ևս ս. Էջմիածնի միաբանության և հատկապես Գեվորգ Ե կաթողիկոս Սուրենյանի կողմից, որը շատ էր սիրում բազմակողմանի զարգացած, եռանդուն, անշահախնդիր հասարակական գործունյա այս քահանային: Ուստի տեր հայրն իր անձնվեր գործունեության համար հոգևոր վերադաս իշխանության կարգադրությամբ մինչև 1920 թվիվ հաջորդաբար արժանացել է ավագության, լանջախաչ և ծաղկյա փիղոն կրելու իրավունքներին և նշանակվել Ապարանի շրջանի առաջնորդական տեղապահ:

Նա լինելով շրջահայաց, որպես շրջանի հոգևոր հովիվ, 1918 թ. շրջանի ժողովրդի մեջ լայն աշխատանք տարավ զինվելու, ապավիտ փոթորիկներից պաշտպանվելու համար:

1918 թվի մայիսի 18-ին խախտելով Բրեստի պայմանագիրը, տանկական բանակը անսպասելի կերպով հանկարծակիի բերելով հայ զորքին, առանց կռիվ գրավեց Ալեքսանդրապոլը և առաջ շարժվեց երեք ուղղությամբ. առաջինը՝ երկաթգծով դեպի Արարատյան դաշտը, երկրորդը՝ Արագածի հյուսիսային լանջերով, շորագյալներով դեպի Բաշապարան, և երրորդը՝ Համամու-Սպիտակի կողմից նորից Ապարան: Հայ գերագույն հրամանատարությունը այդ ճակատում ոչ մի կադրային զորք չէր պահել, չսպասելով այդ կողմից հարձակման: Ուստի թուրքերը երկու կողմից, առանց ժողովրդի դիմադրության, առաջ են շարժվում և հասնում Հաջիխալի: Շորագյալների և Սպիտակի շրջանների ժողովուրդը, հավատալով թուրք փաշաների հավատարմացումներին, չեն դիմադրում, աղ ու հացով են դիմավորում և զինաթափվում: Միայն դիմադրում են գյուղերի 10 տոկոսը. այն է՝ Սերվանջուղ, Զիթ-հանքով, Փոքր Քյափանագ, Չոթոր, Ղլի, Ղարաքիլիսա և Սոգութլու գյուղերը, որոնց առանձին-առանձին խեղդում են, մեծ ու փոքր լցնում մարագները, այրում, իսկ հետո էլ հերթը հասնում է կամովին հանձնվողներին, երիտասարդներին հավաքում, կոտորում են ձորերում, իսկ կանանց ու աղջիկներին բռնում գերեվարության: Միայն ժողովրդի գիտակից, փոքր մասը դարերի փորձից ելնելով, ճանաչելով թուրք զազանին, ամեն ինչ թողած գաղթեց դեպի Ապարան և այլ կողմեր:

Ապարանի ժողովուրդը վերոհիշյալների հակապատկերն էր ներկայացնում, իսկ և իսկ իրենց Մշո, Սասունից, Ալաշկերտից և Բայազետից գաղթած պապերի հարսզատ զավակներն էին, ազատասեր, ռազմատենչ, դյուրաբորբոք և երկաթյա կամքի տեր:

Բոլոր կողմերից գաղթականները եկան փոխեցին Քյուլլուջա գյուղի դիմացի հինգ հարյուր հեկտար տարածություն գրավող հարթավայրում:

Տեր Հովհաննես քահանան, մեկ օր առաջ տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին, իսկույններս գործի է անցնում, շրջանի գյուղերի քահանաների միջոցով եկեղեցիների զանգահարություններով տագնապ է բարձրացնում և ժողովրդին ոտքի հանում զինված դիմադրություն ցույց տալու: Իր հովված Քյուլլուջա և մոտակա գյուղերից հավաքագրում է ճանաչված խիզախներին՝ թվով 200 հոգի աշխարհագորայիներ, զինում բոլորին ինչ ձևի գեներ որ ուներ ժողովուրդը, ինքն էլ զինված մատվեր ատրճանակով, սպայական թրով և մոսին հրացանով, քաղաքացու տարագով, ձեռքն էլ վերցնում է ս. խաչը, աշխարհագորայիներին

օրհնում և կարճ ճառով դիմում նրանց.

«Սիրելի ժողովուրդ, թշնամին հրով ու սրով է առաջանում, հետևյալ թողնելով համատարած կոտորածներ, գերեվարություն, թալան ու ավերածություններ, շուտով նույն բախտին մենք ենք արժանանալու: Շորագյալի ժողովուրդը միամիտ գտնվեց, խաբվեց, աղ ու հացով դիմավորեց և խիստ տուժեց, իսկ մենք այդպիսի սխալ չենք գործի, թշնամուն կդիմավորենք զենակների տարափով, միայն փրկության միջոցը դա է. երդվենք ս. խաչով, որ գենը ձեռքներիս կդռնվենք, հանում մեր սուրբ կրոնի, ազգի փրկության. և նոր սերունդների կողմից չենք նգովվի, անարգանքի պլունին գամվի»: Ամբողջ խումբը ս. խաչով երդվեցին: Տեր Հովհաննեսը սուրը մերկացրած առաջ ընկավ, նրան հետևեցին վրեժի ցասումով լցված երկու հարյուր աշխարհագորայիները:

Բաշապարանի ռազմաճակատում թուրքերի առաջապահ զորամասերի վրա առաջին զնդակները արձակել են Դանագիրմազի քահանա տեր Տաճատի և տեր Հովհաննեսի խմբերը՝ մի քանի կիլոմետր հեռու գրաված դիրքերից, իսկ նրանցից հետո՝ ապարանցիներից կազմված մի քանի մեծ ու փոքր խմբեր: Այդ օրը տեր Հովհաննեսի խումբը մյուսների նման թուրքերի գերազանց ուժերի ճնշման տակ նահանջեց դեպի Բաշապարան: Երկրորդ օրը կռիվ դաշտ հասավ Դովրի գյուղի քահանա տեր Գրիգորը՝ իր 100 հոգուց բաղկացած խմբով, ուտելիքի ու փամփուռների մեծ պաշարով: Գալիս է նաև Բաֆֆու «Խենթ»-ի որդի Արսեն աղան (Տեր-Պողոսյանը)՝ նույնպես հարյուր հոգի հեծյալ աշխատավորների գլուխ անցած և ինքնաբերաբար դարձավ բոլոր աշխարհագորայի խմբերի ընդհանուր հրամանատարը:

Տեր Հովհաննես քահանան, որպես նախկին սպա, խումբը տեղավորեց ռազմաճակատի վտանգավոր հատվածում, այդ օրը ևս հայերը կռվում էին միայն հրացաններով և անցյալ օրը տեր Տաճատի կողմից թշնամուց գրոհով վերցրած մեկ զնդացրով, իսկ թուրքերը՝ թնդանոթներով ու գեներների բոլոր տեսակներով: Թեև կռիվը կատաղի կերպով շարունակվեց մինչև ուշ երեկո, բայց տասնապատիկ անգամ գերազանց ուժերով թշնամուն չհաջողվեց քարին-քարին ձուլված աշխարհագորայիներին պոկել իրենց դիրքերից: Միայն այդ երեկոյան լուր ստանալով, որ Սարդարապատից 6-րդ գունդը օգնության է հասնելու, նպատակահարմար գտան գիշերը աննկատելի նահանջել և մտնել Բաշապարան:

Վերջապես այդ երեկոյան 6-րդ գունդը տեղ հասավ, զինված թնդանոթներով, զրնդացիրներով, զորամասերի բոլոր ստորա-

քառամյակներով ու եզրիդների աշխարհագրային խմբերը Զհանգիր աղայի և Ռսուրբեյի առաջնորդությամբ: Արդեն երրորդ օրվա վաղ առավոտյան սկսվեց տեղի Հովհաննեսի և մյուս աշխարհագրային խմբերի հարձակումը մի թևից, իսկ կանոնավոր գործը մյուս թևից լկտիացած թուրք բանակի վրա: Աշխարհագրայինների եռանդը կրքեղանապատկվեց, քաջության հրաշքներ էին գործում, միշտ նետվում առաջ: Այժմ դերերը փոխվեց, հիմա հայերն էին դիմում գրոհների. թշնամին չդիմացավ, բռնեց փայտուտի անմիան. դիրքերը դիրքերի հետևից հանձնելով մինչև մայիսի 29-ը մեծ կորուստներ տալով հասավ Ալեքսանդրապոլին մոտիկ գյուղերը:

Տեղի Հովհաննեսի և մնացած բոլոր աշխարհագրային խմբերը փառավոր հաղթանակ տարած վերադառնում են տները, քայց գեները միշտ պատրաստ պահած, չնայած որը ալևա պետք չէկավ:

Չնայած աշխարհագրայինները բավականին զոհեր ունեցան, քայց թշնամին տասն անգամ ավելի սպանված տվեց և սուլթանական զորոզ բանակը մի բուռ ժողովրդական ուժերի դեմ տեղում դոփեց, ծուկի չոքեց և առաջինը ինքը սպիտակ դրոշ բարձրացրեց:

1930 թվից սկսած քսաներեք երկար ու ծիգ տարիներ անընդմեջ տեղի Հովհաննես բախանան պաշտոնավարեց ս. Ծողակաթ վանքում, Թիֆլիսի մոտ, Նաֆթուլուի, Երեվանի ս. Հովհաննես, Աստրախանի և Ղըզլարի եկեղեցիներում իբրև վանահայր և ավագերեց: Վերջին անգամ նշանակվում է Կիրովաբադ, որտեղ հինգ ամիս մնալուց հետո ծանր հիվանդանում է, փոխադրվում Երեվան և 1953 թվի ապրիլի 5-ին երջանկահիշատակ տեղի Հովհաննես բախանա Տեր-Մինասյանը հավիտյան փակում է աչքերը 73 տարեկան հասակում:

Նրա մահվան յուրը մեծ վիշտ է պատճառում ս. Էջմիածնի ողջ հոգևոր միաբանությանը և հատկապես Վեհափառ Հայրապետ հանգուցյալ Գևորգ Զ Չորեքշաբանին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ Չորեքշաբանն առանձնահատուկ սեր և հարգանք էր տածում դեպի այդ հոգևորական անխոնջ մշակը և Քրիստոսի քաջ ծառան, Էջմիածնի հոգևոր իշխանության կողմից ինչ որ հանձնարարվում էր և որտեղ որ նշանակվում էր, հեզ ու խոնարհ, առանց տըրտունջի անցնում էր աշխատանքի, հաղթահարելով բոլոր դժվարությունները, ցուցաբերելով երկաթյա կամք ու կորով:

Վեհափառ Հայրապետի հատուկ կարգադրությամբ, պատարագում և տեղի Հովհաննեսի վերջին օծումը կատարում է տեղի Սա-

հակ եպիսկոպոսը, Երևանի եկեղեցիների բախանայական դասի, ժողովրդի մեծ բազմության մասնակցությամբ և ապրիլի 9-ին թաղվում է Երևանի Ծախումյանի շրջանի գերեզմանատանը՝ իր հարազատների մոտ: Որպես հայ ժողովրդի ազատագրության գործին նվիրված հոգևորական և քաջ մարտիկ, նրա պայծառ հիշատակը կապրի նոր սերունդների սրտերում:

Տեղի Զաքար Տեղ-Հարությունյան.

Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը 1918 թվականին երիտասարդ թուրքերին հնարավորություն էր ընձեռել ավարտելու հայ ժողովրդի բնաջնջումը: 1915 թվականին նրանք տեղահան էին արել և կոտորել հայ ժողովրդի արևմտյան հատվածը, իսկ հիմա, հավաքելով իրենց վերջին ուժերը, ռուսական մեծահարուստ պահեստների հաշվին զինելով, հագցնելով և կրճատացնելով իրենց բոկոտն և կիսաքաղց, գրգռված գործը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, եկել ու մտել էին Արարատյան դաշտը, հայության բնօրրանը, որտեղ ավելի քան մեկուկես հազարամյակ կանգնած է ու հավիտյան կանգնած պիտի մնա հայության Մայր Աթոռը: Հայ ժողովրդի համար սկսվել էր նշմարիտ գոյամարտ:

Ինչպես ավանդ է Հ. Թուրքյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքում, «ինքնապաշտպանության գերագույն մոլորմով ոտքի էին ելել հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու կուսակցությունները»:

Հայ ժողովրդի դարավոր ավանդություններն ու սրբությունները անհուն նվիրվածությամբ անցե՞ծ ու անարատ պահպանող հայ հոգևորականները, որոնք հավատքի և հոգեվոր միաթարության ամուր թելերով շարունակ կապված են եղել բազմաշարժար հայ ժողովրդի հետ, նրա ամենադժվարին պահերին միշտ էլ անձնվիրությամբ նրա հետն են եղել և միշտ էլ գտնվել են ինքնապաշտպանության հերոսամարտերի առաջին շարքերում: Սարդարապատի գոյամարտին Ղևոնդ երեցի օրինակով մասնակցել են Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, Զավեն արքեպիսկոպոս Մահմեդի հարապանը, վարդապետներ Դանիելը, Թադևոսը, Եզնիկը, Արարատյան դաշտի, Կոտայքի և Ապարանի գյուղերի շատ բախաններ:

Կոտայքի Թագա գյուղի բախանա տ. Զաքար Տեղ-Հարությունյանը (1868—1943 թթ.) հայտնի էր Սարդարապատի հերոսամարտից դեռ շատ առաջ որպես հայ ազատա-

¹ Հ. Թուրքյան, «Սարդարապատի հերոսամարտը», Երևան, 1969 թ., էջ 146:

գլխավորական շարժման ամենամեծ նպատակն էր փոխել ժամանակը:

Առաջին համաշխարհային պատերազմը հոր աղետ է բերում հայ ժողովրդին: Հայ գաղթականությունը Հին Բաղադետից, Ալաշկերտից և այլա Գանից լցվում է Արարատյան դաշտը, բարձրանում Կոտայք: Տեր Զաքարյանը նշանակվում է Երևանի փոխանորդ տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի տեղակալը և ղեկավարում է պարենի հայթայթումը բազմահազար հայ գաղթականությանը Կոտայքի գավառում:

1918 թվականի մայիսի 15-ին, համարյա առանց դիմադրության, ընկնում է Ալեքսանդրապոլ քաղաքը, երկաթուղային կապերը և հանգույցը Թիֆլիս-Զուլֆա երկաթգծի վրա: Մի քանի օրից թուրքական զորքը մտնում է Արարատյան դաշտը և առանց որևէ դիմադրության հանդիպելու գրավում է Սարդարապատ գյուղն ու կայարանը: Անկման և կոտորածի սպառնալիքը կախվում է Էջմիածնի և Երևանի վրա: Ամբողջ Արարատյան դաշտի հայությունը, որ երեկ կերակրում էր գաղթականներին, այսօր ինքն է տեղահան եղած գաղթում: Սակավաթիվ մնացած զորքը լարում է իր թուր ուժերը թշնամուն կասեցնելու համար:

Ծարժվում է հայ գյուղացիությունը: Եկեղեցին զանգահարությամբ ոտքի է կանգնեցնում նրան Էջմիածնից մինչև Սևան:

Տեր Զաքարյանը հավաքում է ոչ միայն իր համագյուղացիներին, այլև Կոտայքի մյուս հայ գյուղերի, մանավանդ մոտակա Ծահաբ գյուղի բնակիչներին և 250 հոգով, տասն օրվա ուտելիքով ու սեփական զենքով շարժվում է Երևան և առանց կանգ առնելու, մի մասը երկաթուղով, իսկ գումակը՝ սաղեղով, շտապում է Սարդարապատ, որտեղ ամենաեռանդուն մասնակցությունն է ունենում պատմական հերոսամարտին: Տեր Զաքարյանը անհայտ չէր մյուս կույողներին, դրա համար էլ նրա խմբի ժամանումն ու մասնակցությունը կույին խանդավառում է բոլոր մյուս կույողներին:

Սարդարապատի կույից հետո տեր Զաքարյանը վերադառնում է գյուղ, որտեղ հորից նվիրվում է վար ու ցանքին և մեղվապահությանը:

Տեր Զաքարյանը ապրում է 75 տարի և վախճանվում է 1943 թվականին Երևան քաղաքում: Նա մինչև իր կյանքի վերջը ամուսնացած մնաց ազնիվ և տոկուն հոգևորականի կոչման բարձրության վրա, ինչպիսի պայմաններում և որտեղ որ գտնվելիս է եղել նա, ամուսն կապ է պահպանել Էջմիածնի Մայր Աթոռի միաբանության հետ:

Որպես նվիրված հայրենասեր և գործույա, օրհնակելի հոգևորական Գևորգ Ե կաթողիկոսը նրան պարգևատրել է քահանայական լանջախաչով:

